


«ՄՏԵԿՈ»

*Մահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն*

Տինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

31 դեկտեմբեր 2025



ԵՐԵՎԱՆ 2026

Բովանդակություն

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	6
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	7
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10

28.04.2026
 N 032606



Հ Ա Ս Ս Ա Տ ՈՒ Մ Ե Մ
 «Բեքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
 Գլխավոր տնօրեն
 Վահե Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Ստեկո» ՍՊԸ մասնակցին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ստեկո» ՍՊԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի վրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Սեդրակ Բադալյան

Աուդիտոր

28 ապրիլի, 2026թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2025թ.		2024թ.	
	Օանոթ.	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	2,656,505	949,179	
Ոչ նյութական ակտիվներ		2,985	4,001	
Հետաձգված հարկային ակտիվներ	5	3,925	2,868	
Կանխավճարներ հիմնական միջոցների ձեռքբերման համար	6	33,339	200,603	
		<u>2,696,754</u>	<u>1,156,651</u>	
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	7	1,732,908	1,362,403	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	231,716	133,456	
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	499,471	72,172	
		<u>2,464,095</u>	<u>1,568,031</u>	
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>5,160,849</u>	<u>2,724,682</u>	
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
<i>Կապիտալ և պահուստներ</i>				
Կանոնադրական կապիտալ	10	880,000	880,000	
Կուտակված շահույթ		955,493	544,905	
		<u>1,835,493</u>	<u>1,424,905</u>	
<i>Երկարաժամկետ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	11	962,396	62,124	
		<u>962,396</u>	<u>62,124</u>	
<i>Կարճաժամկետ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	11	259,088	372	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	2,049,989	1,151,187	
Շահութահարկի գծով պարտավորություն		53,883	86,094	
		<u>2,362,960</u>	<u>1,237,653</u>	
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u>5,160,849</u>	<u>2,724,682</u>	

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. ապրիլի 28-ին:

Արմեն Աբրահամյան
Տնօրեն



Անդրանիկ Դալդումյան
Գլխավոր հաշվապահ

1-26 Օանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ .	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	13	2,185,084	2,107,671
Վաճառքի ինքնարժեք	14	(1,599,440)	(1,138,011)
Համախառն շահույթ		<u>585,644</u>	<u>969,660</u>
Այլ եկամուտ	15	272,752	14,337
Իրացման ծախսեր	16	(129,229)	(109,061)
Վարչական ծախսեր	17	(188,285)	(156,191)
Այլ ծախսեր		(28,083)	(19,822)
Գործառնական գործունեությունից շահույթ		<u>512,799</u>	<u>698,923</u>
Ֆինանսական եկամուտ/(ծախս), զուտ	11	(21,553)	(2,136)
Այլ ֆինանսական հոդվածներ		9,757	(14,072)
Շահույթ մինչև հարկերը		<u>501,003</u>	<u>682,715</u>
Շահութահարկի գծով ծախս	18	(90,415)	(126,432)
Զուտ շահույթ		<u>410,588</u>	<u>556,283</u>
<i>Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		<u>410,588</u>	<u>556,283</u>

1-26 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	765,000	388,238	1,153,238
Տարվա շահույթ	-	556,283	556,283
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	556,283	556,283
Կանոնադրական կապիտալի թողարկում	115,000	-	115,000
Շահաբաժիններ	-	(399,616)	(399,616)
Գործարքներ սեփականատերերի հետ	115,000	(399,616)	(284,616)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	880,000	544,905	1,424,905
Տարվա շահույթ	-	410,588	410,588
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	410,588	410,588
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	880,000	955,493	1,835,493

1-26 Ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	410,588	556,283
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	227,814	70,277
Շահութահարկի գծով ծախս	90,415	126,432
Ֆինանսական ծախս	21,553	2,136
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	(9,757)	14,072
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>740,613</u>	<u>769,200</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(93,599)	53,586
Պաշարների փոփոխություն	(370,505)	(650,639)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	904,655	345,903
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<u>1,181,164</u>	<u>518,050</u>
Վճարված տոկոսներ	(107,071)	(1,412)
Վճարված շահութահարկ	(126,551)	(97,718)
<i>Գործառնական գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ</i>	<u>947,542</u>	<u>418,920</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(2,016,871)	(531,750)
Հիմնական միջոցների օտարում	250,011	9,232
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ</i>	<u>(1,766,860)</u>	<u>(522,518)</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	-	(399,616)
Կանոնադրական կապիտալի թողարկումից ստացված եկամուտներ	-	115,000
Վարկեր և փոխառություններ	1,247,775	40,852
<i>Ֆինանսական գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ</i>	<u>1,247,775</u>	<u>(243,764)</u>
Դրամարկղում և բանկերում գուտ աճ/նվազում	<u>428,457</u>	<u>(347,362)</u>
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1,158)	(819)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	72,172	420,353
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	<u>499,471</u>	<u>72,172</u>

1-26 Ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՍՏԵԿՈ» ՍՊԸ-ն («Ընկերություն») գրանցվել է Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2007 թ. -ի հոկտեմբերի 31-ին:

Գրանցվելուց ի վեր Ընկերությունը ճանաչվել է որպես Հայաստանի շուկայում ապակու առաջատար ներմուծող ընկերություններից մեկը: Այսօր Ընկերությունը ներկայացնում է ժամանակակից արդյունաբերական համալիր, որը ներառում է մի քանի արտադրական օբյեկտներ:

Գործունեության հիմնական ոլորտները ներառում են.

- Ձևավոր և հարթ ապակիների, էներգոխնայող և մուլտիֆունկցիոնալ ապակիների, վիտրաժային ապակիների, հայելիների և հայելապատ ապակիների մանրամեծաձախ վաճառք,
- Ապակու մշակման ծառայություններ՝ կտրում, անցքերի բացում և բարդ կտրվածքներ, թրծում, եզրերի հղկում և փայլեցում, եզրերի թեթ մշակում (ֆացետ), ծակում, սոսնձում, ամրանավորում և ավազահարում, բազմաշերտ ապակիների (Lamex) պատրաստում
- Էներգոխնայող և մուլտիֆունկցիոնալ ապակեփաթեթների արտադրություն
- Այլումինե և մետաղապլաստե կոնստրուկցիաների արտադրություն,
- Շենքերի արտաքին երեսապատում՝ ապակե փաթեթներով և կոմպոզիտային պանելներով,
- Ամբողջությամբ ապակուց հատակներ, առաստաղներ, պատեր, դռներ և բազրիքներ,
- Հավաքովի կոնստրուկցիաների արտադրություն՝ տաղավարներ, կրպակներ, առևտրի և սպասարկման կետեր և այլն,
- Կահույքի արտադրություն,
- Ավանդական և թաղանթային վիտրաժների արտադրություն,
- Լայնաֆորմատ տպագրություն ցանկացած մակերևույթի վրա:
- Գովազդային վահանակների պատրաստում,
- Լայնաֆորմատ տպագրություն ցանկացած մակերևույթի վրա
- Դիզայնի և նախագծի ամբողջական մշակում, պատվերի վիրտուալ մոդելավորում և վիզուալիզացիա,
- Բոլոր տեսակի ապրանքների տեղափոխում և տեղադրում,
- Մեծածավալ պատվերների դեպքում պահեստավորում և առաքում:

Հաճախորդների կարիքները անընդհատ վերահսկելով՝ Ընկերությունը հետևողականորեն ընդլայնում և արդիականացնում է իր արտադրանքի և ծառայությունների տեսականին: Մատուցելով բարձրորակ արտադրանք, առաջարկելով բազմազան ծառայություններ և ապահովելով հաճախորդների գոհունակությունը՝ ընկերությունը ձգտում է պահպանել առաջատար դիրքը շուկայում՝ գործելով խստորեն իրավական շրջանակի շրջանակներում և հետևելով ազատ շուկայական մրցակցության սկզբունքներին.

Գործունեության վայրերը՝

- Արմավիր, Մայրաքաղաքային փ 174 – Գլխամասային գրասենյակ (գործում է անհատույց օգտագործման պայմանագրով)
- Երևան, Մաշտոցի պողոտա, 29 – Ցուցասրահ և գրասենյակ (գործում է անհատույց օգտագործման պայմանագրով)
- Երևան, Արցախ պողոտա 46/3 – Ընկերության սեփականություն հանդիսացող տարածք

- Երևան, Արին Բերդի փող. 6/29, Էրեբունի թաղամաս – Ընկերության սեփականություն
- Արարատի մարզ, Արզավանդ համայնք, 4-րդ Երկաթուղային փողոց, 23 շենք – Գործում է անհատույց օգտագործման պայմանագրով

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐ

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Զափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի ազգային արժույթը հայկական դրամն է («դրամ»), որն Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է, քանի որ այս արժույթը լավագույնս արտացոլում է Ընկերության հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական էությունը:

Այս ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ ղեկավարությունը կարծում է, որ այս արժույթն ավելի օգտակար է այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված բոլոր ֆինանսական տեղեկությունները կլորացված են մինչև մոտակա հազարը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունների՝ ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստումը պահանջում է, որ ղեկավարությունը կատարի կարևոր հաշվապահական գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացված գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածում եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Ֆինանսական հաշվետվությունների 23-րդ ծանոթագրությունում բացահայտվում են այն նշանակալի ոլորտները, որոնք ներառում են դատողության կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները նշանակալի են ֆինանսական հաշվետվությունների համար:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2025թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2025թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում*» ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- *«Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում»* (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- *«Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություն)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*, փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

ՖՀՄՍ7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» - Բացահայտումներ

ՖՀՄՍ 7-ում կատարված խմբագրումը պահանջում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին:

Նաև պահանջվում է առանձին բացահայտել ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև պարտադիր այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պայմանագրային այն պայմանները, որոնց պատճառով կարող են փոփոխվել պայմանագրային հոսքերի գումարները և ժամկետները, և որոնք հանդիսանում են պայմանական դեպքեր և ուղղակի կապված չեն բազային պարտքային համաձայնագրի ռիսկի և արժեքի փոփոխության հետ:

ՖՀՄՍ 7-ի այս փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի Համաձայն կատարված խմբագրման ՀՀՄՍ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռքբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել:

Նաև թույլատրվում է էլեկտրակայանին նման պայմանագրերը դասակարգել որպես հեջավորման գործիք, եթե հեջավորված հողվածքը ածանցյալ պայմանագրին համահունչ պայմաններով սպասվող իրացումն է:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում

ՖՀՄՍ 9-ում կատարված լրացմամբ հստակեցում է որ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Էլեկտրոնային վճարային համակարգով մարված

ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Համաձայն ՖՀՄՍ 9-ում կատարված խմբագրման էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման դեպքում պարտավորությունը կարող է ապաճանաչվել վճարումը կատարելու պահին, եթե կազմակերպությունը չի կարող չեղարկել, կանգնեցնել կամ հետ կանչել վճարումը, օգտագործել այդ միջոցները և վճարման համակարգի հետ կապված ռիսկը աննշան է:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների -

հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ

Համաձայն ՖՀՄՍ 9-ում կատարված խմբագրման ֆինանսական ակտիվի գծով բավարարված է հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ համարվելու պայմանը, եթե ակտիվի հոսքերը պայմանական են (օրինակ կախված են արտանետված ջերմոցային գազերի ծավալից), պայմանագրային հոսքերը վերանայումից առաջ և հետո համապատասխանում են բազային վարկային համաձայնագրի բնութագրերին, ինչպես նաև հոսքերի վերանայումը կապակցված է բազային վարկային ռիսկին կամ վերանայված հոսքերը նշանակալիորեն չեն տարբերվում շուկայում համանման ֆինանսական ակտիվի հոսքերից:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» - Վերահաշվարկումը

գերադաճային տնտեսության արժույթով

ՀՀՄՍ 21-ում կատարված խմբագրման համաձայն, եթե ներկայացման արժույթը գերադաճային տնտեսության արժույթ է, իսկ ֆունկցիոնալ արժույթը ոչ, ապա ֆինանսական հաշվետվությունները (արտերկրյա ստորաբաժանման արդյունքները և ֆինանսական վիճակը)՝ ներառյալ համադրելի ցուցանիշները, պետք է վերահաշվարկվեն ներկայացվող ամենավերջին հաշվետու ժամանակաշրջանի փակման փոխարժեքով:

ՀՀՄՍ 21-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը», Փոփոխություններ ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» հաշվապահական ստանդարտում

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 18 հաշվապահական ստանդարտը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը և փոխարինում է «ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ին:

Նշանակալի փոփոխության է ենթարկվել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության (նախկին շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը) բովանդակությունը, որտեղ պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:

ՖՀՄՍ 18-ի կիրառմամբ դրամական հոսքերի մասին հաշվետվությունում չի թույլատրվում տոկոսների և շահաբաժինների գծով հոսքերը դասակարգել որպես գործառնական հոսքեր: Նաև դրամական հոսքերի մասին հաշվետվությունը անուղղակի մեթոդով պատրաստելիս սկզբնական ցուցանիշ է համարվում գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը:

ՖՀՄՍ 18-ը և ՀՀՄՍ 7-ի համապատասխան փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ19 «Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերություններ.

բացահայտումներ»

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 19 հաշվապահական ստանդարտը, որը հնարավորություն է տալիս հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպությունների, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:

ՖՀՄՍ 19-ի կիրառումը պարտադիր չէ և նշված պայմաններին բավարարող կազմակերպությունը կարող է այն կիրառել մեկ հաշվետու ժամանակաշրջանում և հրաժարվել դրա կիրառումից մեկ այլ ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 19-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 381.36 ՀՀ դրամ, 1 եվրոն կազմում էր 449.01 դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն կազմում էր 413.89 դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերման գինը, ներառյալ ներմուծման տուրքերը և չվերադարձվող գնման հարկերը և այլ ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Արտադրական, վարձակալության կամ վարչական նպատակներով կամ դեռևս չորոշված նպատակներով շինարարության ընթացքում գտնվող գույքը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած ճանաչված արժեզրկման կորուստը: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսերը, տեղանքի նախապատրաստման, տեղադրման և հավաքման ծախսերը, մասնագիտական վարձատրությունը, իսկ որակավորվող ակտիվների համար՝ փոխառության ծախսերը, որոնք կապիտալացվել են Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Վարձակալության ենթակա շենքերը նույնպես ներառվում են հիմնական միջոցների մեջ, եթե դրանք պահվում են ֆինանսական վարձակալության պայմանագրով: Նման ակտիվները ամորտիզացվում են իրենց սպասվող օգտակար ծառայության ընթացքում (որոշվում է համեմատելի սեփականության ակտիվների հիման վրա) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե այն ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրվող բաղադրիչի հաշվեկշռային արժեքով: Հետագա այլ ծախսումները կապիտալացվում են, եթե այդ ծախսումներից ապագա տնտեսական օգուտներ են ստացվելու: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ վերանորոգման և սպասարկման ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածությունը սկսվում է, երբ ակտիվները հասանելի են օգտագործման համար:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում, որը հաշվապահական հաշվառման ծրագրերի ապահովման համար կազմում է 10 տարի:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվները չեն ենթարկվում ամորտիզացիայի և տարեկան ստուգվում են արժեզրկման համար: Ամորտիզացիայի ենթակա ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները ցույց են տալիս, որ հաշվեկշռային արժեքը չի կարող վերականգնվել: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն գումարի համար, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա վերականգնելի գումարը:

Վերականգնելի գումարը գուտ վաճառքի գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի վերականգնելի գումարը գնահատվում է պակաս դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամական միջոց միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա վերականգնելի գումարը: Արժեզրկումից

կորուստները ճանաչվում են որպես ծախս անմիջապես, եթե համապատասխան ակտիվը չի հաշվառվում վերագնահատված գումարով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատման նվազում:

Երբ արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի հաշվեկշռային արժեքը մեծացվում է մինչև դրա վերականգնելի գումարի վերանայված չափը, բայց այնպես, որ ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի համար ճանաչված արժեզրկումից կորուստ չճանաչվեր: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, եթե համապատասխան ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատման աճ:

3.5 Պաշարներ

Պաշարները ակտիվներ են, որոնք պահվում են վաճառքի համար սովորական գործունեության ընթացքում կամ նյութերի կամ պարագաների տեսքով՝ արտադրության գործընթացում կամ ծառայությունների մատուցման ժամանակ սպառվելու նպատակով: Պաշարներ են ճանաչվում նաև այնպիսի իրեր, ինչպիսիք են պահեստամասերը, պահեստային սարքավորումները և սպասարկման սարքավորումները, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և գույս իրացման արժեքից նվազագույնով: Չուտ իրացման արժեքը սովորական գործունեության ընթացքում գնահատված վաճառքի գինն է՝ հանած ավարտման և իրացման գնահատված ծախսերը: Պաշարների արժեքը հիմնված է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքի վրա և ներառում է պաշարների ձեռքբերման և դրանց առկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները (կիրառելի դեպքերում), բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21 -ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և դասակարգված չեն որպես իրական արժեքով չափվող շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունն աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն

դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունների ամփոփումը ըստ կատեգորիաների ներկայացված է 21-րդ ծանոթագրությունում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նումինալ արժեքը:

Կուտակված շահույթը/(վնասը) ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը/(վնասը):

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին գրանցվում են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որում դրանք հայտարարվում են:

3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.9 Հասույթ

Հասույթը ճանաչվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրային զեղչեր:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-րդ պայլի գործընթացով:

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ	Հոդ	Շենքեր, շինություններ	Մեքենա	Տրանսպորտ. միջոցներ	Արտադրատն. գույք	Այլ	Անավարտ շին.	Վարձ	Ընդամենը
			սարքավորումներ					տար. բարելավում	
<i>Արժեք</i>									
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	379,500	80,640	344,244	42,912	163,671	266,731	20,427	58,707	1,356,832
Ավելացում	8,732 (9,232)	7,085	1,738	-	20,384	62,953	229,588	-	330,480
Օտարում	-	-	-	-	-	-	-	-	(9,232)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	379,000	87,725	345,982	42,912	184,055	329,684	250,015	58,707	1,678,080
Ավելացում	-	-	1,566,243	21,217	2,146	407,599	186,563	-	2,183,768
Օտարում	-	-	(1,505)	-	(625)	(1,808)	(250,011)	-	(253,949)
2025թ. հունվարի 1-ի դրությամբ	379,000	87,725	1,910,720	64,129	185,576	735,475	186,567	58,707	3,607,899
<i>Կուտակված մաշվածություն</i>									
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	7,054	327,424	13,522	127,365	162,875	-	21,723	659,963
Տարվա հաշվարկ	-	4,492	11,015	4,419	10,947	33,925	-	4,140	68,938

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	11,546	338,439	17,941	138,312	196,800	-	25,863	728,901
Տարվա հաշվարկ Օտարման հետևանքով դուրսգրում	-	4,700	130,959	9,623	13,469	63,910	-	3,770	226,431
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	(1,505)	-	(625)	(1,808)	-	-	(3,938)
	-	16,246	467,893	27,564	151,156	258,902	-	29,633	951,394
<i>Հաշվեկշռային արժեք</i>									
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	379,000	76,179	7,543	24,971	45,743	132,884	250,015	32,844	949,179
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	379,000	71,479	1,442,827	36,565	34,420	476,573	186,567	29,074	2,656,505

2025թ. -ի ընթացքում ընկերությունը սկսեց նոր գործարանի շինարարությունը, որը գտնվում է Երևանի Արին Բերդի փողոց 6/29 հասցեում: Գործարանի լիարժեք շահագործման հանձնումը նախատեսվում է 2026թ. -ին: Կառուցումը և հարակից սարքավորումների ձեռքբերումը ֆինանսավորվել են «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ֆինանսական վարձակալության պայմանագրերի միջոցով:

Մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառքի ինքնարժեք	211,822	55,700
Իրացման ծախսեր	11,261	9,716
Վարչական ծախսեր	3,348	3,522
	<u>226,431</u>	<u>68,938</u>

5 ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև .

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	2,868	2,446
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տես ծանոթ. 18)	1,057	422
Տարեվերջի մնացորդ	<u>3,925</u>	<u>2,868</u>

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
<i>Հետաձգված շահութահարկի ակտիվներ</i>			
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	2,868	1,057	3,925
Զուտ արդյունք - հետաձգված շահութահարկի ակտիվներ	<u>2,868</u>	<u>1,057</u>	<u>3,925</u>

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ

Հազար դրամ	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Հետաձգված շահութահարկի ակտիվներ</i>			
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	2,446	422	2,868
Զուտ արդյունք - հետաձգված շահութահարկի ակտիվներ	<u>2,446</u>	<u>422</u>	<u>2,868</u>

6 ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Հիմնական միջոցների լիզինգի պայմանագրով ձեռքբերման պայմանագրի համաձայն՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ին կատարված կանխավճարներ՝ 31,289 հազար դրամի չափով (2024թ.՝ 164,699 հազար դրամ) և այլ կանխավճարներ՝ 2,050 հազար դրամի չափով (2024թ.՝ 35,904 հազար դրամ):

7 ՊԱՇԱՐՆԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք	1,456,913	1,176,496
Ապրանքներ պահեստում	274,943	185,091
Արտադրություն	1,052	816
	<u>1,732,908</u>	<u>1,362,403</u>

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմում է 1,837,370 հազար դրամ (2024թ.՝ 1,626,901 հազար դրամ): 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պաշարները գրավադրված չեն:

8 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	127,179	78,817
	<u>127,179</u>	<u>78,817</u>
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	92,278	53,627
Հարկային դեբիտորական պարտքեր	12,259	1,012
	<u>104,537</u>	<u>54,639</u>
	<u>231,716</u>	<u>133,456</u>

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի գույքը հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 21 օր (2024թ.՝ 14 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Դեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Ընկերության համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար: Արժեզրկված առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում առաջանում են բիզնեսից բիզնես շուկայում գործող հաճախորդներից, որոնք ֆինանսական դժվարություններ են ունենում:

Ծանոթագրություն 22-ում ներկայացված են վարկային ռիսկի և սպասվող վարկային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար տե՛ս ծանոթագրություն 22-ը:

9 ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում	39	73
Բանկային հաշիվներ	499,432	72,099
	<u>499,471</u>	<u>72,172</u>

10 ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

10.1 Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ 2025թ.	Կանոնադրական կապիտալ 2024թ.
1 բաժնեմաս	<u>880,000</u>	<u>880,000</u>

Ընկերության միակ մասնակիցը ՀՀ քաղաքացի Արմեն Աբրահամյանն է: Կանոնադրական կապիտալն ամբողջությամբ վճարված է:

11 ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ

	Պայմանագիր			2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Տոկոսային ծախս
	Սկիզբ	Ավարտ	Տոկոսադրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս	
	Ամերիաբանկ	27/06/2022	27/06/2026	13.5%	3,566	
Էվոկաբանկ	23/08/2024	20/12/2030	10.3%	1,193,041	-	89,774
Էվոկաբանկ	21/01/2025	16/07/2030	8.5%	24,877	-	988
Մելլաթ բանկ	21/02/2020	21/02/2030	9.0%	-	-	15,204
				<u>1,221,484</u>	<u>-</u>	<u>107,071</u>

Հազար դրամ

	Պայմանագիր			2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Տոկոսային ծախս
	Սկիզբ	Ավարտ	Տոկոսադրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս	
	Ամերիաբանկ	27/06/2022	27/12/2025	13.5%	12,361	
Մելլաթ բանկ	21/02/2020	21/02/2030	9.0%	50,000	-	1,412
				<u>62,361</u>	<u>135</u>	<u>2,136</u>

12 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	107,661	131,739
Ստացված կանխավճարներ	1,860,634	984,757
Վճարվելիք հարկեր	59,869	17,136
Հատուցումներ աշխատակիցներին	21,825	17,555
	<u>2,049,989</u>	<u>1,151,187</u>

Առևտրային կրեդիտորական պարտքերի վրա տոկոս չի գանձվում: Ընկերությունը մշակել է ֆինանսական ռիսկերի կառավարման քաղաքականություն՝ իր բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումն ապահովելու համար:

Ընկերության արտարժույթի ռիսկի ազդեցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ծանոթագրություն 22:

13 ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտադրանքի վաճառքից հասույթ	1,472,406	1,485,901
Ապրանքների վաճառքից հասույթ	438,041	362,492
Կատարված աշխատանքներ	9,753	30,892
Ծառայությունների մատուցումից հասույթ	264,884	228,386
	<u>2,185,084</u>	<u>2,107,671</u>

14 ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	1,254,109	870,437
Վաճառված ապրանքների ինքնարժեք	330,738	255,682
Կատարված աշխատանքների ինքնարժեք	7,736	5,357
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	6,857	6,535
	<u>1,599,440</u>	<u>1,138,011</u>

15 ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին	2024թ. դեկտեմբերի 31-ին
	<u> </u>	<u> </u>

	ավարտված տարի	ավարտված տարի
ՀՀ կառավարությունից ծախսերի փոխհատուցում	267,213	-
Տոկոսադրույք դրական բանկային մնացորդի վրա	540	4,918
Այլ	4,999	9,419
	<u>272,752</u>	<u>14,337</u>

16 ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	97,621	80,600
Մաշվածություն և ամորտիզացիա	12,001	10,456
Նյութածախս	9,326	9,122
Մարքեթինգի ծախսեր	8,914	7,344
Ապահովագրություն	994	1,112
Այլ	373	427
	<u>129,229</u>	<u>109,061</u>

17 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	114,032	89,278
Գրասենյակային ծախսեր	51,557	48,056
Մաշվածություն և ամորտիզացիա	3,365	3,538
Նյութածախս	914	1,539
Հաշվապահական և իրավաբանական ծառայություններ	12,468	2,700
Բանկային ծախսեր	5,033	8,758
Այլ	916	2,322
	<u>188,285</u>	<u>156,191</u>

18 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	91,472	126,854
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթ. 5)	(1,057)	(422)
	<u>90,415</u>	<u>126,432</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է հետևյալ կերպ .

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա- վետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա- վետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	501,003		682,715	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%) (Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, գուտ	90,181	18.00	122,889	18.00
	234	0.05	3,543	0.52
Շահութահարկի գծով ծախս	90,415	18.05	126,432	18.52

19 ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետվության ամսաթվից հետո, սակայն ֆինանսական հաշվետվությունների հաստատումից առաջ՝ 2026թ. -ի փետրվարի 28-ին, Միացյալ Նահանգների և Իսրայելի զինված ուժերը հարձակում սկսեցին Իրանի վրա, որին հաջորդեցին տարածաշրջանի տարբեր երկրների դեմ ուղղված պատասխան գործողություններ: Այս ռազմական էսկալացիան կարող է զգալի հետևանքներ ունենալ ՀՀ ամբողջ տնտեսության համար՝ հաշվի առնելով այն էական առևտրատնտեսական կապերը, որոնք Հայաստանը պահպանում է ինչպես Իրանի, այնպես էլ ռազմական գործողություններին մասնակցող այլ երկրների հետ:

Ընկերությունը չունի անմիջական առևտրային գործընկերներ ռազմական գործողություններին մասնակցող տարածաշրջանի երկրներում, սակայն այս հակամարտության լայնածավալ ազդեցությունը որոշակի հետևանքներ կունենա նաև ընկերության գործունեության վրա: Ղեկավարությունը անընդհատ վերլուծում է էսկալացիայի ազդեցությունը ընկերության գործունեության արդյունքների վրա, սակայն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ հնարավոր չէ հուսալի քանակական գնահատականներ տալ:

20 ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գնահատումներն ու դատողություններն անընդհատ վերանայվում են և հիմնված են պատմական փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների վերաբերյալ սպասումները, որոնք համարվում են ողջամիտ տվյալ հանգամանքներում:

20.1 ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Ընկերությունը գնահատումներ և ենթադրություններ է անում ապագայի վերաբերյալ: Արդյունքում ստացված հաշվապահական գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքներից: Ստորև քննարկվում են այն գնահատականներն ու ենթադրությունները, որոնք զգալի ռիսկ ունեն հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտման պատճառ դառնալու համար:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը

Ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը: Ղեկավարությունը կարծում է, որ հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված

Ժամկետները էապես չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների իրական օգտակար ծառայության ժամկետները տարբերվում են գնահատականներից, ֆինանսական հաշվետվությունները կարող են էապես տարբերվել:

18.2 ԿԱՐԵՎՈՐ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում դեկավարության կողմից կայացված դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Չետաձգված հարկային ակտիվների ճանաչում

Հետաձգված հարկային ակտիվի ճանաչման չափը կախված է ապագա եկամուտների առկայության հավանականության գնահատումից, որոնց դիմաց կարող են օգտագործվել նվազող ժամանակավոր տարբերությունները և հետագա ժամանակահատվածում փոխանցվող հարկային վնասները: Բացի այդ, հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումներն ու անորոշությունները գնահատելիս անհրաժեշտ է զգալի դատողություն:

21 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

21.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար ընդունված էական հաշվապահական քաղաքականության և մեթոդների մանրամասները, ներառյալ ճանաչման չափանիշները և եկամուտների ու ծախսերի ճանաչման հիմքը, ներկայացված են 3-րդ ծանոթագրությունում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Անորոշագցված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	127,179	78,817
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	499,471	72,172
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	626,650	150,989

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբե րի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբե րի 31-ի դրությամբ
<i>Անորոշագցված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	107,661	131,739
Վարկեր և փոխառություններ	1,221,484	62,496

1,329,145	194,235
-----------	---------

22 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերությունը ենթարկվում է ֆինանսական գործիքների հետ կապված տարբեր ռիսկերի: Ռիսկերի հիմնական տեսակներն են շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ակտիվորեն չի զբաղվում ֆինանսական ակտիվների առևտրով սպեկուլյատիվ նպատակներով և ոչ էլ օպցիոններ է վաճառում: Ստորև նկարագրված են ամենակարևոր ֆինանսական ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

Շուկայական ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի՝ ֆինանսական գործիքների օգտագործման միջոցով, մասնավորապես՝ արտարժույթի ռիսկի, տոկոսադրույքի ռիսկի, որոնք առաջանում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը որոշակի գործարքներ է իրականացնում արտարժույթով: Հետևաբար, առաջանում են փոխարժեքի տատանումների ռիսկեր: Ընկերության գործարքների մեծ մասն իրականացվում է ՀՀ դրամով: Արտարժույթի փոխարժեքների ռիսկերը առաջանում են Ընկերության արտասահմանյան վաճառքներից և գնումներից, որոնք հիմնականում կատարվում են եվրոյով, ԱՄՆ դոլարով և այլ արժույթներով:

Ստորև ներկայացված են Ընկերությանը արտարժույթային ռիսկի ենթարկող արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները: Ներկայացված գումարները հիմնական ղեկավարությանը ներկայացված գումարներն են, որոնք փոխարկվել են ՀՀ դրամի՝ փակման փոխարժեքով:

Հոդված

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	47,891	-	-
	47,891	-	-
<i>Զուտ արդյունք</i>	(47,891)	-	-

Հոդված

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	34,139	26,237	6,193
	34,139	26,237	6,193
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	28,568	1,843	11
	28,568	1,843	11
<i>Զուտ արդյունք</i>	5,571	24,394	6,182

Հետևյալ աղյուսակը մանրամասնում է Ընկերության զգայունությունը դրամի 10% (2024թ.՝ 10%) աճի և նվազման նկատմամբ եվրոյի, ԱՄՆ դոլարի և այլ արժույթների նկատմամբ: 10%-ը (2024թ.՝ 10%) ներկայացնում է ղեկավարության գնահատականը արտարժույթի փոխարժեքների հնարավոր փոփոխության վերաբերյալ: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն չմարված արտարժույթով արտահայտված դրամական հոդվածները և ճշգրտում է դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջում՝ արտարժույթի փոխարժեքների 10% (2024թ.՝ 10%) փոփոխության համար:

Դրամի 10 %-ով (2024թ.՝ ն՝ 10%) արժևորումը ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ արժույթների նկատմամբ կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Այլ արժույթի ազդեցություն	
	2025	2024	2025	2024	2025	2024
Շահույթ կամ վնաս	(4,789)	557	-	2,439	-	618
	(4,789)	557	-	2,439	-	618

Արտարժույթի փոխարժեքների նկատմամբ ազդեցությունը տարվա ընթացքում տատանվում է՝ կախված արտասահմանյան գործարքների ծավալից: Այնուամենայնիվ, վերը նշված վերլուծությունը համարվում է Ընկերության արժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ պայմանավորված ֆինանսական ակտիվներով, ներառյալ բանկերում պահվող կանխիկ միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվներ պահպանելով գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու համար:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների մնացած պայմանագրային մարման ժամկետները: Աղյուսակը կազմվել է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով այն ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը պարտավոր կլինի մարել այդ պարտավորությունները:

2025թ.

	Անտոկոս	Տոկոսային	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		10%	
Մինչև 6 ամիս	53,831	125,358	179,189
6 ամսից մինչև 1 տարի	53,831	121,792	175,623
1 տարուց ավել	-	974,334	974,334
	107,661	1,221,484	1,329,145

2024թ.

	Անտոկոս	Տոկոսային	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		11%	
Մինչև 6 ամիս	65,870	31,248	97,118
6 ամսից մինչև 1 տարի	65,870	31,248	97,118

131,739	62,496	194,235
---------	--------	---------

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերությամբ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը գգալիորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերին:

23 ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և մասնակցին բավարար եկամուտ ապահովի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «գուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամ F	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամ F
<i>Զուտ պարտք</i>		
Փոխառություններ	1,221,484	62,496
Հանած՝ ստորադաս վարկեր	-	-
Հանած՝ մնացորդներ բանկերում	(499,432)	(72,099)
	<u>(499,432)</u>	<u>(72,099)</u>
<i>Ճշգրտված սեփական կապիտալ</i>		
Ընդհանուր սեփական կապիտալ	1,835,493	1,424,905
Ավելացված՝ ստորադաս վարկեր	-	-
	<u>1,835,493</u>	<u>1,424,905</u>
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	<u>(0.27)</u>	<u>(0.05)</u>

24 ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

24.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՅՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ	Վարկեր և փոխառություններ
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	20,920
<i>Դրամային հոսքերից</i>	
Հասույթ	165,000
Մարումներ	(124,148)
Վճարված տոկոսներ	(1,412)
<i>Ոչ դրամային հոսքերից</i>	
Տոկոսի հաշվեգրում	2,136
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	62,496
<i>Դրամային հոսքերից</i>	
Հասույթ	1,622,622
Մարումներ	(463,634)
Վճարված տոկոսներ	(107,071)
<i>Ոչ դրամային հոսքերից</i>	
Տոկոսի հաշվեգրում	107,071
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,221,484

26 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

Ընկերության կապակցված կողմերը ներառում են նրա մասնակցին և հիմնական ղեկավարությունը, ինչպես նկարագրված է ստորև.

26.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի պարոն Արմեն Աբրահամյանի կողմից, ով ընկերության միակ մասնակիցն է:

26.2 Գործարքներ դեկլարության հետ

Հիմնական դեկլար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	20,463	19,989